ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XIV, № 4, 1961 Биологические науки

Խ. Ս. ԿՈՉՏՈՅԱՆՑ

Ս/թ ապրիլի 2-ին հանկարծամահ եղավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Ասալինյան մրցանակի լաուրեատ, Մոսկվայի համալսարանի կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, սովետական ակադեմիկոս դիտնական,



1927 թ. ՍՄԿՊ անդամ Խաչատուր Սեդրակի Կոչտոյանցը։ Խ. Ս. Կոչտոյանցի աշխատությունները մեծ դեր են խաղացել էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի, նեյրոֆիզիոլոգիայի զարգացման գործում և կարևորագույն ներդրում են գրգռման էնզիմո-բիմիական տեսության ասպարեզում։

Խ. Ս. Կոչտոյանցի անվան հետ անխզելիորեն կապված է սպիտակուցային կառուցվածքների, մասնավորապես օրգանների ֆունկցիայի ներվային կարգավորման մեջ սուլֆհիդրիլ խմբերի դերի պարզաբանումը։ Խ. Ս. Կոչտոյանցը հայրենական կենսաբանական գիտության պատմության խոշորագույն և ճանաչված հետազոտողներից մեկն է։

Խ. Ս. Կոչտոյանցը ծնվել է 1900 թվականի սեպտեմբերի 26-ին, Լենինական քաղաքում։ Նա իր մանկությունն անց է կացրել Պյատիգորսկ քաղաքում, որտեղ և միջնակարգ կրթություն է ստացել։ 1922 թվականին նա մտել է Մոսկվայի Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Լինելով 2-րդ կուրսի ուսանող, Խաչատուր Սեդրակովիչը աշխատել է ուսանողական գիտական խմբակներում և ֆիզիոլոգիայի, միկրոբիոլոգիայի և կենդանաբանության ասպարեզում մի շարք հետաքրքրական աշխատանքներ է կատարել։ Մոսկվայի հա-

համալսարանի բժշկական ֆակուլտետը վերջացնելուց հետո Խ. Ս. Կոշտոյանցը, իբրև բացառիկ ընդունակություններով օժտված ուսանող, ընդունվում է ֆիզիոլոգիայի գծով ասպիրանտուրա։ Խ. Ս. Կոշտոյանցը իր գիտական պատրաստությունն ստացել է սովետական և արտասահմանյան խոշորագույն գիտնականների (Սամոյլովի, Առնոլդի, Ռազենկովի, Իորդանի) ղեկավարությամբ։ Ասպիրանտուրան ավարտելուց հետո նա աշխատում է Տիմիրյազևի գիտահետազոտական ինստիտուտում, իսկ 1931 թվականին ընտրվում է Մոսկվայի Պետհամալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր։ 1942 թվականին ընտրվում է նույն ամբիոնի վարիչ և գլխավորում մինչև իր կյանքի վերջը։ 1939 թվականին նա ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1943 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ և կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։ 1943 թվականից մինչև 1947 թվականը ակադեմիկոս Կոշտոյանցը եղել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտի դիրեկտորը։ Գլխավորելով կենսաբանական գիտությունների բաժանմունքը և Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, Խաչատուր Սեդրակովիչը քիչ ջանքեր չի գործադրել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կենսաբանությունը, մասնավորապես ֆիզիոլոգիան զարգացնելու ուղղությամբ։

Ակադեմիկոս Կոշտոյանցն ավելի քան հարյուր գիտական աշխատությունների հեղինակ է։ Դրանց թվում են այնպիսի ծանրակշիռ աշխատություններ, ինչպիսիք են «Համեմատական ֆիզիոլոգիայի հիմունքները» (երկու հատորով), որը հրատարակվել է նաև անգլերեն, հունգարերեն, բուլղարերեն լեզուներով, «Վեգետատիվ և անիմալ օրգանների ֆունկցիաների վիճակը, նրանց էվոլյուցիայի լույսով», «Սպիտակուցային մարմինները, նյութերի փոխանակությունը և ներվային ռեգուլյացիան», «Ռուսաստանի ֆիզիոլոգիայի պատմության ակնարկներ» և այլ աշխատություններ։

Մեծ է Կոշտոյանցի ծառայությունը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում։ Նրա բազմաթիվ աշակերտներն աշխատում են ՌՍՖՍՌ-ում, Հայաստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում, Կիրգիզիայում, ինչպես նաև ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկաներում՝ Ալբանիայում, Բուլղարիայում, Հունգարիայում և Չեխոսլովակիայում։

Խաչատուր Սեդրակովիչը իր բեղմնավոր գիտական գործունեությանը զուգակցում էր հասարակական մեծ աշխատանքը։ Երկար տարիներ նա ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների և ֆարմակոլոգների համամիութենական ընկերության նախագահի տեղակալն էր և ամենաեռանդուն մասնակցություն էր ունենում համամիութենական ու անդրկովկասյան համագումարների և կոնֆերանսների կազմակերպմանը։ Խ. Ս. Կոշտոյանցը միջազգային ֆիզիոլոգիական կոնգրեսներում և սիմպոզիումներում ըստ արժանվույն վեր էր հանում սովետական գիտության նվաճումները։ Նա ՍՍՌՄ երկրորդ գումարման Գերագույն Սովետի դեպուտատ էր։

Սովետական կառավարությունը բազմիցս նշել է Խ. Ս. Կոշտոյանցի աչքի ընկնող ծառայությունները։ Նա պարգևատրված էր Լենինի, Աշխատանքային Կարմիր Դրոշի երկու շքանշանով, «Պատվո նշան» շքանշանով։

Նրա եռուն գործունեությունը, պայծառ կերպարը, խոր հայրենասիրությունը՝ գիտությանը անշահախնդիր ծառայելու օրինակ են ի բարօրություն մեր Հայրենիքի։ Խաչատուր Սեդրակի Կոշտոյանցի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը,

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բժշկական գիտությունների բաժանմունքը,

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտական գիտությունների բաժանմունքը,

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեն,

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրությունը,

Երևանի Պետական համալսարանը,

Երևանի Բժշկական ինստիտուտը,

Հայաստանի ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների և ֆարմակոլոգների բնկերությունները,

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երևանի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը